Հավելված

2023թ. փետրվարի 6-ին

կնքված N O-1146/11015 պայմանագրի

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	գումար (դրամ)
1.	Դպրոցականների օլիմպիադաների անցկացում /ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն հրամանով հաստատված «ՀՀդպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման» կարգով/	Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **դպրոցական փուլի** օնլայն կազմակերպում 7 առարկաներից:	**- 2023թ. հունվարին կատարվել են հետևյալ աշխատանքները՝** - բոլոր յոթ առարկաների պատասխանների թերթիկները ըստ ընթացակարգի հավաքվել են և ստուգող-մշակող հանձնաժողովի կողմից ստուգվել են համապատասխան հատուկ սարքերի և ծրագրի միջոցով, –ստուգման արդյունքները ամփոփվել են և հրապարակվել www.olymp.am կայքում, - հրապարակվել են մարզային փուլի մասնակիցների անվանացանկերը, - դպրոցական փուլի արդյունքները մշակվել են ըստ մարզերի և առարկաների: - **Նոյեմբեր- դեկտեմբեր ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները՝** -տպագրվել են յոթ առարկաների համար 60000 հատ պատասխանների թերթիկներ, -հավաքագրվել են 2023-2024 ուստարվա առցանց օլիմպիադայի մասնակիցների տվյալները, որը հրապարակվել է www.olymp.am և lib.armedu.am կայքերում, - դպրոցներին բաժանվել են դպրոցական փուլի համար տպագրված պատասխանների թերթիկները,	Շնորհալի և ստեղծագործ կարողություններով օժտված աշակերտների հայտնաբերում, նրանց մոտ ուսումնական առարկաների նկատմամբ լրացուցիչ հետաքրքրությունների առաջացում, մասնագիտական կողմնորոշման խթանում:	ըստ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի	

			- նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացվել են 2023-2024 ուստարվա մաթեմատիկա, ֆիզիկա, աստղագիտություն, կենսաբանություն, ինֆորմատիկա, քիմիա և աշխարհագրություն առարկաների դպրոցական փուլերը, -բոլոր յոթ առարկաների պատասխանների թերթիկները ըստ ընթացակարգի հավաքվել են և ստուգող-մշակող հանձնաժողովի կողմից ստուգվել են համապատասխան հատուկ սարքերի և ծրագրի միջոցով՝ այդ նպատակով առանձնացրած սենյակում, - ստուգման արդյունքները ամփոփվել են և հրապարակվել www.olymp.am կայքում:			
2.		Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **մարզային փուլի** օնլայն կազմակերպում 7 առարկաներից և մյուս 9 առարկաներից:	**-2023թ. հունվարի 18-ից փետրվարի 9-ը կազմակերպվել են դպրոցականների առարկայական 16 օլիմպիադաների մարզային փուլի աշխատանքները՝** - 2022-2023 ուստարվա հանրապետական օլիմպիադաների մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն և աստղագիտություն առարկաների մարզային փուլի մասնակիցների ցուցակների հրապարակվել են www.olymp.am կայքում, - մաթեմատիկա առարկայի 5-7-րդ դասարանների և կենսաբանություն առարկայի մարզային փուլերը կազմակերպվել են այնպես, ինչպես դպրոցական փուլի աշխատանքները՝ բոլոր մարզերին բաժանվել են համապատասխան քանակությամբ պատասխանների թերթիկներ, հավաքագրվել են և ստուգվել հատուկ ծրագրի և սարքերի միջոցով, արդյունքները մշակվել են ըստ մարզերի և առարկաների, - առաջին անգամ կենսաբանության օլիմպիադայի մարզային փուլը անցկացվեց երկու օրում՝ տեսական և փորձարարական, փորձարարական փուլը կազմակերպելու համար բոլոր մարզեր գործուղվել են հանրապետական հանձնաժողովների մեկական անդամներ,		ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի /2023թ. հունվարի 18-ից փետրվարի 9-ը/	

			- յոթ առարկաների գծով կատարվել են մարզային փուլի կազմակերպման և համակարգման աշխատանքներ /ճշգրտվել են մասնակիցների անվանացանկերը և դրանք տեղադրվել են olymp.am կայքում, առաջադրանքները, լուծումները, ստուգման չափանիշները և պատասխանները ուղարկվել են մարզային կոորդինադորներին, մարզային հանձնաժողովների կողմից մասնակիցների աշխատանքները ստուգելուց հետո արդյունքները հավաքագրվել են, մշակվել են ըստ միավորների, որից հետո ճշգրտվել են հանրապետական փուլի մասնակիցների անվանացանկերը/, - մյուս 9 առարկաների օլիմպիադաների մարզային փուլը կազմակերպելու համար այդ առարկաների հանրապետական հանձնաժողովների կողմից կազմած առաջադրանքները, լուծումները, ստուգման չափանիշները և պատասխանները ուղարկվել են մարզային կոորդինադորներին, հավաքագրվել են այդ առարկաներից հանրապետական փուլ անցած մասնակիցների ցուցակները և տեղադրվել olymp.am կայքում, - բոլոր օլիմպիադաները կազմակերպվել են ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված ժամանակացույցին համապատասխան:			
3.		Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **հանրապետական փուլի** կազմակերպում 16 առարկաներից:	-**2023թ. փետրվարի 17-ից ապրիլի 1-ը կազմակերպվել են դպրոցականների առարկայական 15 օլիմպիադաների հանրապետական փուլի աշխատանքները՝** - 2022-2023 ուստարվա հանրապետական օլիմպիադաների 15 առարկաների **հանրապետական** փուլի մասնակիցների ցուցակների հավաքագրվել և հրապարակվել է www.olymp.am կայքում, -Օլիմպիադաները կազմակերպելու համար ձեռք են բերվել՝ ծածկագրված տետրեր, գրիչներ, A4 ֆորմատի թղթեր, դիպլոմներ, գովասանագրեր, վկայականներ, - պատճենահանվել և օլիմպիադաների մասնակիցներին են բաժանվել առաջադրանքները, - օլիմպիադաների մասնակիցների համար կազմակերպվել են գիշերակացի և սննդի ծառայություններ,	Առարկայական հանձնաժողովների գնահատման հիման վրա լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտներին ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով պարգևատրում:	ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի /2023թ. փետրվարի 17-ից/:	

			- ապահովվել է գիշերող մասնակիցների և հանձնաժողովների անդամների տեղափոխումը, - քիմիա և կենսաբանություն առարկաների փորձարարական փուլերի համար ձեռք են բերվել անհրաժեշտ լաբորատոր նյութեր և սարքեր, -հանձնաժողովների անդամների հետ կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր և վճարվել են աշխատավարձեր՝ ըստ նախահաշվի, - հանրապետական փուլի արդյունքները մշակվել են ըստ առարկաների և միավորների, -արդյունքները հրապարակվել են www.olymp.am կայքում, -օլիմպիադաների անցկացման համար հատկացվել են համապատասխան տարածքներ, իսկ ընթացքը վերահսկել են համապատասխան հսկիչ-կազմակերպիչները: - **փետրվարի 17-20-ին կազմակերպվել է մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** մասնակիցների թիվը՝ 260, մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 10, 2-րդ կարգի դիպլոմ 24, 3-րդ կարգի դիպլոմ 36, գովասանագիր 32, - **փետրվարի 20-23-ին կազմակերպվել է ֆիզիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** - մասնակիցների թիվը՝ 98, մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 6, 2-րդ կարգի դիպլոմ 12, 3-րդ կարգի դիպլոմ 11, գովասանագիր 11, - **փետրվարի 24-ին կազմակերպվել է աստղագիտություն առարկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 23, մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 3, 2-րդ կարգի դիպլոմ 2, 3-րդ կարգի դիպլոմ 4, գովասանագիր 1, - **փետրվարի 24-27-ին կազմակերպվել է կենսաբանության հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 78,			

			-մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 1, 2-րդ կարգի դիպլոմ 2, 3-րդ կարգի դիպլոմ 8, գովասանագիր 13, - **մարտի 1-4-ը կազմակերպվել է աշխարհագրության հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 75, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 4, 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 15, գովասանագիր 14, - **մարտի 3-6-ը կազմակերպվել է քիմիայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 93, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 6, 2-րդ կարգի դիպլոմ 7, 3-րդ կարգի դիպլոմ 15, գովասանագիր 14, - **մարտի 8-10-ը կազմակերպվել է պատմություն առարկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 114, - մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 7, 2-րդ կարգի դիպլոմ 7, 3-րդ կարգի դիպլոմ 9, գովասանագիր 12, - **մարտի 10-13-ը կազմակերպվել է ինֆորմատիկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 41, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 3, 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 10, գովասանագիր 11, - **մարտի 17-19-ը կազմակերպվել է անգլերենի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 90, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 6, 2-րդ կարգի դիպլոմ 4, 3-րդ կարգի դիպլոմ 10, գովասանագիր 15, - **մարտի 17-19-ը կազմակերպվել է ֆրանսերենի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 68, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 4, 2-րդ կարգի դիպլոմ 7, 3-րդ կարգի դիպլոմ 7, գովասանագիր 12, - **մարտի 17-19-ը կազմակերպվել է գերմաներենի**			

			հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝ -մասնակիցների թիվը՝ 59, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 2, 2-րդ կարգի դիպլոմ 7, 3-րդ կարգի դիպլոմ 9, գովասանագիր 11, - **մարտի 24-26-ը կազմակերպվել է հայոց լեզվի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 114, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 6, 2-րդ կարգի դիպլոմ 9, 3-րդ կարգի դիպլոմ 13, գովասանագիր 17, - **մարտի 26-28-ը կազմակերպվել է հայ գրականության հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 113, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 5, 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 16, գովասանագիր 20, - **մարտի 28-30-ը կազմակերպվել է ռուսաց լեզվի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 113, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 4, 2-րդ կարգի դիպլոմ 5, 3-րդ կարգի դիպլոմ 16, գովասանագիր 22, - **մարտի 30-ից ապրիլի 1-ը կազմակերպվել է հայոց եկեղեցու պատմության հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 113, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 9, 2-րդ կարգի դիպլոմ 9, 3-րդ կարգի դիպլոմ 10, գովասանագիր 43, **- մայիսի 12-14 կազմակերպվել է ՆԶՊ առարկայի հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝** -մասնակիցների թիվը՝ 77, -մրցանակներ՝ 1-ին կարգի դիպլոմ 7, 2-րդ կարգի դիպլոմ 7, 3-րդ կարգի դիպլոմ 7, -բոլոր առարկաների դիպլոմակիրներին տրվել են համապատասխան դիպլոմներ, գովասանագրեր, իսկ դիպլոմների չարժանացած աշակերտներին՝ մասնակցության			

			վկայականներ, -հանրապետական եզրափակիչ փուլի դիպլոմակիրների անվանացանկը ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ կրթաթոշակ տրամադրելու համար:			
4.		ՀՀ առարկայական միջազգային թիմերի նախապատրաստում /Միջազգային թիմերի հավակնորդների հետ լրացուցիչ պարապմունքների կազմակերպում և ՀՀ դպրոցականների միջազգային օլիմպիադաների մասնակիցների ընտություն/	-միջազգային օլիմպիադաների 7 առարկաների հանրապետական փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրների հետ մարտ-հունիս ամիսներին կազմակերպվել են լրացուցիչ պարապմունքներ, - տրամադրվել են սենյակներ, լաբորատորիաներ, փորձեր կատարելու համար անհրաժեշտ սարքեր-սարքավորումներ, նյութերի ու այլ պարագաներ, - ՀՀ առարկայական թիմերը ձևավորելու համար անցկացվել են մրցույթներ, - ձևավորված թիմերի և նրանց ղեկավարների կազմը ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը,	-թիմային կազմի և թիմային աշխատանքի ստեղծում, - հանգիստ պայմաններում արդյունավետ աշխատանք	ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի /նախնական՝ 2023թ. մարտ-հունիս/	
5.		Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության կազմակերպում:	-կազմակերպվել է ՀՀ առարկայական միջազգային յոթ թիմերի վիզաների ձևակերպման, մասնակիցների ավիատոմսերի և առողջապական ապահովագրության ձեռքբերման աշխատանքները, - վճարվել են թիմերի մասնակցության անդամավճարները, - հուլիսի 2-13-ը ապահովվել է ՀՀ թիմի մասնակցությունը մաթեմատիկայի 64-րդ միջազգային օլիմպիադային, 6 մասնակից: ՀՀ թիմի արդյունքները՝ 2 արծաթ, 3 բրոնզ, 1 գովասանագիր, - հուլիսի 10-17-ը ապահովվել է ՀՀ թիմի մասնակցությունը ֆիզիկայի 53-րդ միջազգային օլիմպիադային, 5 մասնակից: ՀՀ թիմի արդյունքները՝ 1 արծաթ, 4 բրոնզ, - հուլիսի 16-25-ը ապահովվել է ՀՀ թիմի մասնակցությունը քիմիայի 55-րդ միջազգային օլիմպիադային, 4 մասնակից: ՀՀ թիմի արդյունքները՝ 1 ոսկի, 2 բրոնզ, 1 գովասանագիր, - հուլիսի 3-11-ը ապահովվել է ՀՀ թիմի մասնակցությունը կենսաբանության 34-րդ միջազգային օլիմպիադային, 4 մասնակից: ՀՀ թիմի արդյունքները՝ 1 գովասանագիր,			

			- օգոստոսի 8-14-ը ապահովվել է ՀՀ թիմի մասնակցությունը աշխարհագրության 19-րդ միջազգային օլիմպիադային, 4 մասնակից: ՀՀ թիմի արդյունքները՝ 1 բրոնզ, - օգոստոսի 10-20-ը ապահովվել է ՀՀ թիմի մասնակցությունը աստղագիտության 16-րդ միջազգային օլիմպիադային, 4 մասնակից : ՀՀ թիմի արդյունքները՝ 1 արծաթ, 1 բրոնզ, 2 գովասանագիր, - օգոստոսի 28-ից սեպտեմբերի 4-ը ապահովվել է ՀՀ թիմի մասնակցությունը ինֆորմատիկայի 35-րդ միջազգային օլիմպիադային, 4 մասնակից: ՀՀ թիմի արդյունքները՝ 3 բրոնզ, -ունեցել ենք 31 մասնակից, ովքեր արժանացել են 1 ոսկե, 4 արծաթե, 14 բրոնզե մեդալների և 5 գովասանագիր, -օլիմպիադաների մասնակիցների և մեդալակիրների անվանացանկը ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ կրթաթոշակ տրամադրելու համար:			
6.		olymp.am կայքի վարում, համացանցի օգտագործմամբ հանրապետական օլիմպիադաների աշխատանքների կազմակերպում և այլն	- **կատարվել են հետևյալ աշխատանքները՝** -olymp.am կայքի թարմացում, օլիմպիադաների մասին տեղեկությունների, արդյունքների, հայտարարությունների տեղադրում: -մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ինֆորմատիկա, աստղագիտություն, աշխարհագրություն առարկաների օլիմպիադաների առաջին և երկրորդ փուլերի կազմակերպում համացանցի օգտագործմամբ, -համեմատական վերլուծությունների կատարում, -Հանրապետական օլիմպիադաների մասին ամբողջական տեղեկատվությունների տեղադրում /ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններ, ընթացակարգեր, տարբեր փուլերի մասնակիցների անուններ, առաջադրանքներ ու պատասխաններ, արդյունքներ, դիպլոմակիրներ/ olymp.am կայքում, -olymp.am կայքում տեղադրվել են լրացուցիչ պարապմունքների, թիմերի կազմավորման համար անցկացվող մրցույթների մասին հայտարարություններ, - տեղադրվել են միջազգային օլիմպիադաներում ՀՀ մասնակից թիմերի անվանացանկերը, ԿԳՄՍ նախարարի հրամանները,	Օլիմպիադաների նկատմամբ աշակերտների մոտ հետաքրքրությունների ստեղծում և զարգացում: Հանրապետական և միջազգային օլիմպիադաների մասին լիարժեք տեղեկությունների ապահովում և անհրաժեշտ նյութերի և առարկայական օլիմպիադաների գրքույկների հրատարակում:	2023թ. հունվար-դեկտեմբեր	

			- կայքում տրվել է 7 առարկաների միջազգային օլիմպիադաների մասին լայնածավալ տեղեկատվություն, - լուսաբանվել են ՀՀ թիմերի մասնակցության արդյունքները:			

Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ

դպրոցի տնօրեն՝ Ա.Սարգսյան

18.01.2024թ.